

# ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS  
BAREGORÇ

Սեպտեմբեր 2008 թ.,  
9 - 10 միացյալ համար

«ԳՈՐԴՅԵՆ ԱՆԵՒՔՅԱՆ՝ ԲԱՇԱԹԱՐԻ ԲԱՇԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴԻՍՆԱԴՐԱՄԻ» ԵՆԱՍՄՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐՈՒ

«Բարեգործ» պարբերականն այսուհետև էլ շարունակելու է «Գորգեն Մելիքյանի Բաշաթարի բազմազգային քնտանիքների հիմնադրամի» գործունեության լուսարձանությամբ: Այն պարբերաբար անդրադառնալու է նաև մեր երկիրը իզրայելացիներին, ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու միտված ուղիչ ծրագրերի ու գործընթացների հայտարարման և ստատիզիկ հրատարակման, Հայաստանի, Արցախի, Չախաբիքի և Միլիտարի տարբերությամբ խնդիրներին:

Ի.ՍՄԳ.

## ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԻ ԳՈՐԾ Է

Բարեգործությունը ցուցանալու է, այլ գիտակցված և բարձր նպատակների միտված հայրենասիրական արարք, որից շահում են մարդիկ ու երկիրը: Որպես մարդու և հայրենիքի հանդեպ հոգեկան հարկ՝ բարեգործություն անում են անգլյուս, մուսլիմական անհատներ: Այդպես էլ վարվել են մեր նշանավոր բարեգործները, որոնց ջանքերով ու ներդրումներով երկրաշարժի աղետից հետո, պատերազմի ընթացքում և հետպատերազմյան վերջերի ապահովման շրջանում շատ կարևոր խնդիրներ են լուծվել: Գաղտնիք չէ, որ հիշյալ դեպքերի և արտագաղթի հետևանքով մեր երկրում նվազել են մարդիկ, սրվել է

քանակի խնդիրը, որը դարձել է լուրջ խոչընդոտ համազգային մեծ խնդիրների լուծման ճանապարհին: Այն վերաբերում է ազգային կյանքը բնականում հունի մեջ դնելու համար, ցավոք, միայն պետական միջոցներն ու հնարավորությունները բավարար չեն, ուրեմն՝ հարկավոր են համընդհանուր ջանքեր, և բարեգործությունը պետք է կրի համազգային բնույթ:

Մեր ժամանակներում առաջնահերթ ու հրատալական է դառնում ծննդության աճի ապահովումը բոլոր հնարավոր միջոցներով: Այդ նպատակին են ծառայում դեռ 1995 թվից Արցախում Բերդու Նաչարյանի հիմնադրամ՝ իրի մայրերի և նորածնների

օգնության «Արհին» կենտրոնը, որի օրինակով Մարալիկում ամերիկահայ բարերարների ջանքերով 2001 թ. ծնավորվել նույն նպատակին ծառայող «Անահիտ» աճի հիմնադրամը: Նորաճեց նյութական, բարոյական ու մասնագիտական բժշկական օժանդակությամբ Արցախում և Մարալիկում վերջին տարիներին լույս աշխարհ են եկել ավելի քան 19 հազար 200 հայ մանուկներ՝ մոտ 18 հազարը՝ Արցախում, մյուսները՝ Մարալիկում: «Բարեգործի» ընթերցողին ենք ներկայացնում «Անահիտ» հիմնադրամի խիստ ընդորջ կարգախոսում ու գործունեության բնութագրիչը:

## 1,5 միլիոն զոհերի դիմաց՝ 1,5 միլիոն հայ մանուկների ծնունդ.

առհա ա՛յս է «Անահիտ» աճի հիմնադրամի առաքելությունը:

Anahid Fund  
P.O. Box. 25201  
Glendel, CA 91225-1010  
Tel: (818) 409-0655

E-mail: anahid - fund @ yahoo. com  
www. anahidfund. com

### Ահագանգի պես է հեղույ «Անահիտ» անձի հիմնադրամի նույն կոչը՝ 1,5 միլիոն զոհերի դիմաց 1,5 միլիոն հայ մանուկների ծնունդ՝ հեպտիտիս հավելումով

Հայաստանում բնակչության թիվը զգալիորեն նրվազել է և շարունակում է նվազել, և այս փաստը բոլորիս յալ հայտնի է: Դրա հիմնական պատճառներից մեկը ծնունդների պակասությունն է:

Արտագաղթի և ծնունդների պակասի պատճառով Հայաստանը ունի բացասական աճ: Երե այսպես շարունակվի, Հայաստանի բնակչության թիվը կնվազի և կհասնի փոսնագաղթը ստեղծանք:

Սա մի մտահոգիչ փաստ է, որ պետի գրավի բոլոր հայերի ուշադրությունը բե՛ Կալիֆորնիայում, բե՛ Հայաստանում: Երե այսօր մենք միջոցներ ձեռք չառնենք, փաղը պղտն ուշ կլինի:

Լուս Անդեղեսում գործող «Անահիտ» հիմնադրամը ավելի քան յոթ տարի է, ինչ աշխատանք է տանում, որպեսզի նպաստի Հայաստանում ծնվելության աճին:

«Անահիտ» հիմնադրամը Հայաստանում ամեն մի կնոջ կոչ է անում ունենալ ոչ թե մեկ, այլ երեք երեխա:

Սա՛ է մեր հայերենի գոյատևման երաշխիքը: Ո՛ւմ համար ենք կառուցում ճանապարհներ ու դպրոցներ: Այն երեխաները, որ պետի հաճախեն այդ դպրոցները, այսօր չեն ծնվում:

Արտափոխվե՛ք, և տեսնե՛ք դանդաղ ոչնչացման վտանգը ու երե գեղասպանությունը չլինի կարող կանխել. դա մեր ձեռքում չէր, ազգի պահպանությունը հիմա մեր ձեռքում է, և մենք կարող ենք աստիճանական սպասումսկիքը կանխել:

Անուարբերության մասնեկ այս ցավերի հարցը՝ կնչանակի ազգի կամովին ինքնասպանություն:

Եկե՛ք բողբոյ մասնակից լինե՛ք: Երե ինքնենք չենք կարող երեխա ունենալ, ապա մյուսներն աստարենք այն մարդկանց, ովքեր կարող են և ցանկանում են:

**Մեր տուր մակ մեր քանակն է:**

## ՆՈՐ ԵՐԱՆԳՆԵՐ ԱՐՅԱԼԻ ԳՈՒՅՆԵՐԻՆ

### Մարգ Կարդանյան

Հակառակ մեր դիելին հարևանների թեթևամտ արարչացանցների՝ պատմական անհիշելի ժամանակներից Արցախի հողը հայն է շեքնելու, րիցարանայկների ընթացքում կառուցել իր բնակավայրերը, վանքերն ու բերդերը, պատմաշխարհային հագաղափոր ինքնատիպ հուշարձաններ ու, որպես իր սեփական ու հարգալուտ տունը, խճամուկ է նույնիսկ մեկ տասնամյակներում, երբ խորհրդային իշխանությունները ստալինյան կամայկնությունը, մարտու և ազգերի իրավունքների կապտագույն ոտնահարումով՝ հայաշուռչ ու հայառուգի պատճառակ այդ տարածքը, Նախիջևանի հետ միասին, կվիրաբերելեցին նոր-նոր ստեղծվող Արցրիցան հողըրդոնով մի նորաբուխ պետական կազմավորման: Նույն այդ կամայկնությունն հետևանքն են այսօր վրաց - օսական ու վրաց - արհապակալան պատերազմի վերանաճ հակամարտությունները և ոչ միայն տրամբ:

Աշխարհը լրելայն տեսավ, թե ի՛նչ՝ ճակատագրի արժանագավ և ի՛նչպես հայաբախվիլից երբեմնի հայր պատմական շեն ու ծաղկուն Գորտան գավառը՝ Նախիջևանը, ի՛նչպես ոչնչացվեցին նրա հայաաաաաաա ու հայաաաաաա հուշարձաններն ու Ջուղայի հասարակոնի օտոտուն-

փշրումով դեռ շարունակում են զնջել հայության հետքերն իր իսկ բնօրրանից: Իսկ աշխարհն ինչե՛ր չի տեսել ու լուսե՛լ...

Ժամանակին բացահայտ այս անարդարության դեռ հասարակ դիմում - բողբոցները դեռ անաճ բուշկիլայն խուլ պատնեշին ու մարեցին անարձագանք:

Ոչնչանալու նույն ճակատագիրն էր սպառնում մակ Արցախին, երե հայությունը 1988-ից ի վեր արդարապա պայքարով, միացյալ ու համախումբ ներքուլ, իր ազնիվ զավակներին հերոսական ջանքերով ու ծանր գոհերի գնով չազատագրեք աղբյուրնանկալան բոնատիրությունից:

*Ո՛ր չի հնուց այս աշխարհում հայ համնարին խանդը - Հայը չինել է սովորում, իսկ ոտիքը՝ քանդել -*

դիպուկ բնորոշել է քանաստեղծ Հովհաննես Շիրազը: Հենց այս քնորոշման հաստատումն է, որ պատերազմից հետևանքների վերացում-մը, ավերված երկրի վերաշինումն ու վերքերի բուժումը, թեև դանդաղ, քայց իրականացվում է խարտիկի զինադադարի առաջին իսկ օրերից:

Արցախյան հեղուսական ազատամարտի հարցանակում իր մեծ ներ-

դումն ունեցած հայորդիներից մեկն անունով 1997 թ. ստեղծվեց « Գորգեն Սեյիթյանի» Քաշարտի բազմագավալի ընտանիքների հիմնադրամը, որն ավելի քան տասը տարի տարբեր ուղղություններով իրականացնում է հայրենամեղ լուրջ գործունեություն: Ան հայ դպրոցների վերաշինության ու ազգաբնակչության օտցիալական խըղձիկներից չի տարանջատել մշախույրի բնագավառը և ամեն կելյա նպատակ է նրա տարբեր ճյուղերի զարգացմանը:

Գորգազործությունում ու անողնագործությունը հայոց Արցախում հնուց անդի արվեստի բազմազան մակարանները նվաճած արիեստներ են, որոնց ապիպաղուն մնուշները խորհրդային լապիներին աշխարհի տարբեր երկրներում կազմակերպված օրգազգային ցուցահանդեսներում մեղիքները, որպես հայ մշախույր սեփականելու հետևողական ուղղակիություններ անբարոյաց մոսուրում, հասնի են ներկայացրել որպես իրենց սեփական ստեղծագործություն: Մշակութային այս քաջահայտ կորպուսը, սակայն, համապատասխան ասպաններում դեղև արժանի դատապարտում չի ստացել, քայց ազատագրված Արցախում իհուստ անտեղծորոտո մտոտու համոտ

բացվել են հայ մարդու՝ իր բնատուր ծիրքերը դրսևորելու և ներ ազգային արեւտներն ու արվեստները զարգացնելու լայն հիմնարկվորություններ: Գրա վառ ապացույցներից մեկն էլ «Գուրգեն Մելիքյանի» Քաշաբաղի բազմազավակ ընտանիքների հիմնարկամի» հովանավորությանը շուրջ երեսուս օժտված հայ միայնակ կանայք՝ ասեղնագործներ, ժանկագործներ, գորգագործներ, մերգրավել են հնագույն հայ ձեռագործ արվեստի ավանդները շարունակելու և զարգացնելու գործընթացում:

Նույն շրջանակում կազմակերպվել է նաև հուշանվերային գորգերի արտադրություն, որով գոնե մասամբ ապահովվում է նաև Քաշաբաղի կա-

մանց աշխատանքային գրավածություն լուծումը

Հաջողություններն ակնառու են: Ասեղնագործ-ժանկագործ Սոֆյա Գալիայանը, որը ֆիզմաս գիտությունների քեկնածու է, և ասեղնագործ-գորգագործ Մարգարիտ Վարդանյանը, որն ավարտել է Նրևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետը, 90-ական թթ. կեսերից հայկական ասեղնագործության մրուրյուններն ու գորգարվեստի նախշազարդային հարստությունը պահպանող իրենց ձեռագործ աշխատանքները ներկայացրել են Իտալիայում, Գերմանիայում, Կամբոդիայում, Լիբանանում, Շվեդիայում, Ավստրիայում կազմակերպված մի-

ջազգային ցուցահանդեսներում: Այս ամենի հետ միասին նրանք իրենց ծնողներից ժառանգաբար ստացած հմուտություններն ու իրենց նվաճած վարպետությունը ուսուցանում են նոր սերնդին:

Նշանակալից այս երևույթը բընականաբար պիտի արժանանար օտար և հայրենի մասնագետների գնահատությանը: Չեզ ենք ներկայացնում ՀՀ Մշակույթի և երիտասարդության նախարարության՝ Ժողովրդական արվեստի թանգարանի հավաստագիրը, որ 2007 թ. սեպտեմբերի 29-ին տրվել է այնտեղ բացված իրաշալի ցուցահանդեսի առիթով:

## Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր

*Հայ ճանաչված մտավորական, ազգային մշակույթի զարգացման երախտավոր Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ եւ անմիջական հովանավորությամբ 1997 թ. կազմակերպված՝ Քաշաբաղի (Արցախ) բազմազավակ ընտանիքների հիմնարկում միջոցներով 30 միայնակ կին ստեղծագործներ ներգրավվել են հայկական ասեղնագործության ստեղծման աշխատանքում՝ հիմք ընդունելով մշակութային արժեք ունեցող հայկական արվանդական ասեղնագործությունը եւ գորգագործությունը:*

*Ուսումնասիրելով թանգարանին ներկայացրած ստեղծագործությունները՝ Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի տնօրինությունը հավաստում է՝ ստեղծագործական խմբի ստեղծած նմուշները կատարված են ձեռքով, եւ բացառվում է մեքենայով աշխատելու որեւէ միջամտություն: Հիացմունք են առաջացնում էսրիզավորումը, գորգարվեստի արվանդական ձևերը նորացնելու հմտությունը եւ կատարման տեխնիկական վարպետությունը: Ասեղնագործություններն ունեն և՛ հուշանվերային, և՛ կիրառական նշանակություն, հետևաբար մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել նորոյրա շուկայում: Գորգերը ասեղնագործվում են բնական հենքով և քարձրորակ բնական թելերով, ուստի դրան կզոյատենն դարելը՝ ապահովելով հազարամյակներից եկած հայ հնագույն գորգերի ազգային՝ իրեղեն, փաստացի արժեքները:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ  
ԹՆՆ ԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ՝ (ստորագրություն)

Ս. ՍԱՐԴՈՒՆԱՆՅԱՆ



## ՀԱՐՑԱԶԹՐՈՒՅՑ

### ամերիկահայ բարերարուհի ՔԵՐՈՒՆՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Մարտի 28-30-ը Արցախում՝ Բերձորում, «Թուֆենկյան հիմնադրամի» ջանքերով և ԼՂՀ կառավարության հովանու ներքո կայացավ 80 սփյուռքահայ գործարարների և կազմակերպությունների խորհրդավճռողով, որը քննարկում էր Բաղարադի զարգացման նոր ծրագիր: Մասնակցում էր նաև ամերիկահայ նշանավոր բարերարուհի Քերոլան Նազարյանը: Նրա հետ մեր հարցազրույցը սիրով ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:



**ՀԱՐՑ.** – Տիկին՝ Քերոլյան, նորից բարով եք եկել Հայաստան. ես գիտեմ, որ Դուք, ամերիկացի հայուհի լինելով, Հայաստանը համարում եք հայրենի տուն և արդեն 1988 – 89 թվականներից ի վեր սերտորեն կապված եք Հայաստան աշխարհին: Առաջին անգամ Դուք Հայաստան եկաք աղետալիոր երկրաշարժից փոստամուկի մի օգնություն բերելով: Այդ ժամանակ էր, որ Գորգեն Մելիքյանը Ձեզ հարցրեց՝ իսկ Կարաբադի համար ի՞նչ եք բերել:

**ՊԱՏ.** (Չստանձ է խոսել գրական արևելահայերենով) – Դա ճիշտ է, այդ ժամանակ էր:

**Հ.** – Դուք նախապես ոչինչ չգիտեի՞ք Կարաբադի մասին, թե՞ նորից այդ ժամանակ խնայաք:

**Պ.** – Այդ բոլորովին շրտակ չէ, որովհետև երբ սկսվեց արցախյան շարժումը, և Նյու Յորքում մասնակցեցինք համառ Կարաբադի կազմակերպված ցույցերին ու միտինգներին, արդեն ինչ-որ չափով գիտեի, քայք այստեղ գալով և Գորգեն Մելիքյանից լսելով՝ ավելին իմացա և հասկացա, որ ան ալ մեզի համար շատ կարևոր հող է, և որ-շեցի անելիքս:

**Հ.** – Ուրեմն՝ այդ դեպքերից հետո Դուք ավելի սերտացրիք Ձեր կապը Հայաստանի և Արցա-

խի հետ, Չեր այցելությունները դարձան հաճախակի, իսկ երբ սկսվեց արցախյան ազատագրական պատերազմը, մեզ հայտնի է, թե որպես հայուհի՞ Դուք ինչ մասնակցություն եք ունեցել պատերազմում և ինչ կարևոր ու վճռական դերակատարություն՝ մեր կառավարման մեջ:

**Պ.** – Այո՛, պատերազմի սկիզբում ի վեր ինչ որ կարող էիք՝ առաջին րոտոզնություն անհրաժեշտ գործիքներ, ծրարներ, դեղորայք, քիմոտ, սպիրտա, յոդ՝ վերընր մաքրելու համար, և այլն, սկսանք Գորգենի միջոցով ուղարկել Կարաբադ: Հետո ես ալ տեսեր եմ՝ վիրտեֆիլմերու մեջ վի-

րավոր զինվորներու որ քույց կուտան, իրենց շարիկներնու տակ՝ բևեռու, ոտքերու կամ մարմնի այլ վիրավոր տեղերու վրա, մեծ ուղարկած փորկապուտներ են: Իսկ 1992-ին, երբ Լաչինը ազատագրվեց, նա առաջին անգամ ամճամբ գացի Արցախ՝ ամեն տեղ՝ Շուշի, Մտեփանակերտ, Դրբժում, մինչև Մաճկալաչեն: Այդ ժամանակ արդեն բավական շատ վիրավորներ տեսա, շատերին՝ որպես բժշկ, անճամբ օգնեցի: Արդեն տեսա բուն պատերազմական իրականությունը և հասկացա, թե ինչ էր պետք զինվորական խնայողապ ստեղծելու և բանակի այլևայլ պետքերու և մեր հաղթանակի համար: Կապի միջոցներ և այլ ապրքավորումներ մույնպես կարողացա հայթայթել ու տեղ հասցնել:

Հ. - Դուք ինքներդ տեսնո՞ւ եք պատերազմական գործողությունները:

Պ. - Այո՞, ինարկե: Պատերազմի մեջ անմիջական մասնակցությունը նրանք, բայց տեսներ են՝ ինչպես են կոտում: Բանին՝ անգամ եմ ներակրծության տակ ընկել, փա՞ռք Առտոն, չեմ վնասվել:

Հ. - 1994-ից հետո մինչև հիմա զինադադար է, և հայ ժողովուրդն այժմ մտածողված է պատերազմի վերաբեր բուժելով, հետևանքները վերացնելով ու երկիրը վերաշինելով: Դուք է՞լ այժմ ամերիկահայ գործիչներով հենց այդ նպատակով եք եկել Հայաստան ու Արցախ: Ի՞նչ ծրագրեր ունեք Հայաստանում և մասնավոր Արցախում ապրող մարդկանց վիճակն ու ապրելակերպ բարելավելու, երկիրը շինացնելու այնպես, որ հայ մարդը չլի իր հողն ու ապրի այնտեղ:

Պ. - Օգնություն իմ ծրագիրը նախ բժշկական է, նոր չէ. գործադրվում է դեռ պատերազմական օրերից:

Հ. - Որքան հայտնի է, կարևոր համարելով ծննդությունն աճը Արցախում՝ Դուք դեռ պատերազմական օրերին էիք մտածում

այնտեղ ծննդատուն ստեղծելու մասին, և 1995 թվից՝ արդեն 13 տարի, հիմնել եք հղի կանանց օգնության «Արփեն» կենտրոնը, որը Չեր միջոցներով իրականացնում է համակողմանի օգնություն:

Պ. - Այո՞, «Արփեն» կենտրոնը ճիշտ ժամանակին է բստեղծվել և գործում է արդյունավետ: Հղի կանանց ու մայրերին, բացի բժշկական մասնագիտական խորերդատվությունից, ամեն ամիս տալիս ենք նոր հագուստ, ամոնը, կենցաղային ապրքեր մանր ու խոշոր աներածնու պարագաներ: Ե՛րշտ է, մեկու մը դեղ, սնունդ կամ հագուստ սալը, անշուշտ, ամենն լավ բանը է՛, սակայն հղի կինները և մասնավոր մայրերն ու ամոնց նորածին փոքրիկները մեր ուշադրության ու եռացարության կարիքն ունեն հատկապես հետծննդյան առաջին երեք ամիսներին: Քասն տարվա ծրագիր է ևս, որ պիտի կատարվի:

Հ. - Ամեն անգամ Հայաստան ու Արցախ գալով՝ Դուք, անշուշտ, դրական վիճակում եք, որտեղ ևս տեսնում եք: Հիմա՞՝ ինչպիսին է վիճակը՝ Չեր հայացքով:

Պ. - Ղարաբաղի բնակիչները դժվար ապրում էին աղքատության մեջ, բազմաթիվ հոգսերով պայմաններում մայրացած կինը չէր կարողանա ինքնուրույն հաղթանարել դժվարությունները առանց մեր նպատակայաց օգնության: Հիմա մեկ զգալի մասը հոն համեմատաբար լավ կապրի, հիմա հիվանդանոցները առաջ են գացած, պայմանները մի քիչ լավացել են, բայց, ցավոք, բոլորի համար հավասար չեն. լավ ապրողների կողքին դեռես կան մեր օգնության կարիքն ունեցող շատ աղքատներ: Նոր միմիստրը Արմեն Խաչատուրյանը լավ է, երիտասարդ է, ուժեղ, բայց կան ֆիզիկական դժվարություններ: Ի՞նչ բխում է՝ լավ մարդիկ շատ կան թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի մեջ, որ կողմն իրեն

ազգակցներուն օգնել, ամոնց ուղղակի կազմակերպել պետք է:

Կարևոր մեկ խնդիր այ կս. մեներ գիտակցաբար բաղաբականության մեջ չենք ուզեր մտնալ. մեներ համարում ենք, որ Հայաստանի ժողովուրդը, Ղարաբաղի ժողովուրդը բոլորս մեկ ենք, միասին ենք՝ հայ ենք: Չեմ ընդուներ դարաբաղայի, հայաստանցի, աներիկահայ, ֆրանսահայ, ա՛ս չեմ ուզեր, ամո՛ր չեմ ուզեր և այլն: Թուրքը մեզի դեմ կայրի նե՛՝ ամենուս դեմ պիտի կանգնի, ոչ թե ամեն մեկու դեմ առանձին: Եթե բոլորի համար մեներ մեկ ենք, մե՛նք ինչու մեզի կրածներ, ամիկա ընդհանուր հայության դեմ է, ոչ թե դարաբաղայի կամ հայաստանցիի:

Մյուս խնդիրը Քաշաբաղն է՝ Արցախ - Հայաստան ռազմավարական կանոնքը. հիմնականում այստեղի կենսապայմանների բարելավման նպատակով էր այս երեք օրվա կոնֆերանսը, որ քրինք: Հաս ճանապարհներն խնդիր կս, խմբեր ջրի, նոր երկվարանոցների, դպրոցների, բնակելի տների, աշխատատեղերի: Ե՛լ ևս առիթ եղավ, որ առաջին անգամ Արաբսի արիք գացցինք, Կովասկան, Իշխանավոր, այնտեղն է՛. Ջիրքերն ու նորից եղա Արցախի մյուս վայրերում՝ Մտեփանակերտ ու Շուշի, և կրկին համազվեցի, որ ընկիր շատ կս, և ես չեմ կարնր կրնակս ցարժեմ ու երբայ՝ մարդոց բողնեղով ներդաստան մեջ, կիսատ բողամ մեր ծրագիրները. աղիկա չի կարելի ու չի կարելի: Ամեն բան խնդիր է այստեղ ու լուծում պահանջող: Բայց ամեն մեկ կարևորն այն է, որ թեկուզ վնաս պայմաններու մեջ, ժողովուրդը կս իր ազատագրված հայրենիքում: Մարդիկ կուզան կտեսնեն ու կպարտանան՝ այս պայմաններու մեջ ի՛նչպես կապրին, երեխա կնծծացնեն և ժպիտով, ուրախությամբ: Ուրեմն՝ ոգին անտր է:

Հ. – Քաջաբարձուն կազմակերպված այս եռօրյա ժողովը ի՞նչ որոշեց, ի՞նչ արդյունավետ ծրագրեր ու նախաձեռնումներ պիտի իրականացվեն, ինչպե՞ս պիտի ապրելակերպը բարելավվի, որ շատ հայեր ուզեցան Ղաթաբարձուն ապրել:

Պ. – Մասնավոր անձեղու ներդրումները կան, մեծահարուստներու ծրագիրները կան, ինչպես Թյուֆենյան հիմնադրամինը, հասարակական կազմակերպություններ կան, որոնք միջոցներ ունին և պատրաստ են գրադրելու խնձուր ցուրի, ճանապարհների, ինչպես և նոր դարպոցներ՝ որակյա ուսուցիչներով, նոր հիվանդանոցներ մասնագետ բժշկիկներով ապակեղեն, բնակելի տներ կառուցելու, տեղեկում մեծ կամ փոքր արտադրություններ կազմակերպելու, աշխատանքներ ստեղծելու գործով: Խորհրդատվություն այս ծրագիրները գործնականի պիտի վերածեն:

Հ. – Անշո՛ւշտ, Գոթ ճանապարհի առեղծվ նկատել չունեք Արևան-Մոեկիանակերտ մայրուղին, այլ գյուղամիջյան ու միջգյուղական ճանապարհները:

Պ. – Այո՛, Երևան-Մոեկիանակերտ մայրուղին կա, բայց այդ ճանապարհից դուրս մյուս գյուղերը կապող ճանապարհներն սղորակի ահավոր են: Մեկ-մեկ են հանդիպում լավ ճամնապարհներ, որոնք դեռ բորի ժամանակ խտրակամորեն իրենց գյուղերը կապելու համար են կառուցված եղեր. հայ գյուղերը իրարու կապող ճանապարհներն չեն վատ. անոթը պետք է անհասպաղ վերաշինվի:

Հ. – Գոթ Չեր ծնողներին ինչպե՞ս էք հիշում:

Պ. – Լավ ծնողներ ունեցած են՝ պարկեշտ, հայասեր ու հայրենասեր: Նրանց հեղորոշյալ մեջ էր պատանկան հայրենիքը, նրանց ոգին է արթնցած իմ մեջ: Հիշ կիներուն և մայրերուն սպասարարող «Արի՛նեն» կենդանոր իմ մայրիկիս անունով է:

Հ. – Արևմտյան Հայաստանի ո՞ր բնակավայրից էլիմ նրանք բռնագաղթվել:

Պ. – Խարբերդից և Արաբկիրից:

Հ. – Փորձե՛լ եք այցելել Չեր ծնողների ծննդավայրը:

Պ. – Այո՛, երբ տարի առաջ գացի Արևմտյան Հայաստան՝ մեր նախկին հողերը տեսնելու: Հայրիկես գյուղը չկար արդեն: Հայկական ոչինչ չկար այլևս՝ ո՛չ եկեղեցին, ո՛չ՝ հայ րնտամիք, անգամ մեկ բար՝ հայկական հիշեցնող: Հոն քանի մը քյուրդ րնտամիքներ հիմա կապրին ահավոր արքատոբյան ու հետամնացության մեջ: Հյուրդ կիմ մը ըսավ, թե Հարություն անուն հայ մեկ կար, որ իրենց տրվեցուց թե ինչպես պետք է հաց բխել, և մեզի հասնար անոր պես հաց թխեց՝ վրան խաչ դնելով:

Անհավատալի՞ բան:

Հայրիկես կատամեր, որ սար մը վրա եռն, որի վրա ամեն գիշեր լուսինը կ'ելներ: Այլ քյուրդ կնոջը հարցուցի՝ ա՛յն է սարը, որուն վրա գիշերները լուսինը կցբարձրանա, ըսավ՝ հա՛:

Այ սարը կար, ուրիշ ոչինչ:

Հ. – Սարը կա, լուսինը կա, մնացածը չկան:

Պ. – Այո՛, այո՛:

Հ. – Տիկե՛ն Քերոլան, տարիներ առաջ Չեր հայաստանյան ուղևորությունների տպավորությունները հրատարակեցիք առանձին գրքով և վերնագրեցիք «Կանց հայրենի տնից»: Ես հիշում եմ, որ այդ գրքի շնորհանգրվ կազմապարտվեց Երևանի պետական համալսարանում, և ես էլ եթե հիշում եմ, ներկայացրի այդ գիրքը ներկաներին: Հետո իմ այդ ելույթը տպագրվեց նաև իմ «Գրական հանգրվաններ» գրքի առաջին հատորում: Կարծես Գուրգեն Մելիքյանն այդ գիրքը տվել է Չեզ:

Պ. – Այո՛, իհա՛րկե, լավ եմ հիշում:

Հ. – Մտադիր չե՞ք Չեր հետագա այցելությունների տպավորություններն էլ գիրք դարձնել:

Պ. – Դժվար է: Այ գիրքը հնարավոր չէր որ չգրվեր և զգույնք բարդ ու զովար ժամանակներն դեպքերի, իրադրությունների անմիջական տգաղափարությամբ: Այդերի երկաշարժ, պատերազմ, ցուրտ ու խավար օրեր, անասելի գրկանցներ և հերոսություն ու հաղթանակ: Հիմա առաջվա ոգևորությունը չկա: Միտոս կտորված է: Գիտեք, որ ձրգձգվող ծանր գործ մ'ունինք հաստատանք ու դատանքներու մեջ. անարդար դատ մը կա, սա հինգ տարի է՝ չի հաջողվիր նետ վերցնել հայրենիքի մեջ մեր միջոցներով կառուցված մեր տունը, որը մի ճարպիկ խարդախ, հարավազ ճևճանավով և չարաշահելով մեր վրաստատությունը, գրանցեր է իր անունով:

Հ. – Գիտեմ այդ ցավալի պատմությունը, ինքս էլ մի քանի անգամ ներկա եմ եղել դատական նիստերին: Գիտե՛ք, տիկե՛ն Քերոլան, ամեն ազգի մեջ էլ խարդախ ու ավազակ կա: Մենք բացառություն չենք: Բայց մեր ամեն ինչը ցայտուն, բնագծված է. եթե լավ ենք, շատ լավն ենք՝ Չեզ մտան, եթե վատն ենք՝ նրա մտան՝ շատ վատ: Բայց դրանք Չեզ չեն կարող իրարափոխելու հայրենիքից: Դուք էլ շարունակում եք Չեր անսակարկ օգնությունը, քանի որ սրտով ու ջերմությամբ եք փարված Հայաստանին, Արցախին ու նրա մարդկանց: Ա՛յ, հիմա էլ եկել էք ո՛չ անճանալան գործով: Ես չեմ ուզում սիրապանել Չեզ, երեսպաշտ չեմ. պարզապես, որպես հայ մտավորական, գիտեմ Չեր հայրենասնվելու ու հերոսական գործունեության պատմությունը և եկել եմ գրուցելու մեր նոր ծրագրերի և համբողջ հանրա խնդիրների մասին: Մի նուրբ հարց կա, որ հետաքրքրում է կ՛հիմն, կ՛ «Քարեգործի» քննադատներին. Չեր համեցավ ի՞նչ վերաբերմունք էր անսուն Հայաստանի հայություն, արցախահայության և իշխանությունների կողմից, հասկանում



են, գնահատա՞տ՞ն են Չեր գործունեությունը, քե չէ:

**Պ. — Այո՛, ինձի կրփա՛ այո՛:** Ես չեմ մտածո՞ր գնահատվելու մասին: Իմ տխուր պատմություն կամ կամայանց կոտորվի, ինձնից հետո ուրիշներ կուզան: Բայց երբ Լարաբաղ, Մտեկահանկերա կամ Գյումրի կերթան, իմ անուն կ'ըսեն, ամեն մարդ գիտե, ինձի կանանչա, կհարգե: Աղ ինձի համար ամենից կարևորն է, որ ճանկցողներու ու ժողովուրդիս վրա զեջ տպավորաբար լսող լինեմ:

**Հ. —** Լա՛վ ասացիր. Չերգից հետո «ուրիշներ կուզան»: Դուք եղաք առաջիններից մեկը, որին մնամվելու համար չէ, այլ հայրենիքի ու ժողովրդի հանդեպ որդական պարտք կատարելու համար է, որ Ամերիկայի մեր հայրենակիցները գալիս են Չեր ճանապարհով:

**Պ. — Այո՛, շատեր կըսեն՝ քու լինելը կարաղով, քու եղբայրը լինելով է, որ Հայաստանի խնդիրները մենք ալ ճանկցանք: Անոնք շատ նշանավոր մարդիկ են, անունները տալ չեմ ուզեր, քայց անոնք ինձի կ'ըսեն՝ եթե դու՛ն չ'ըլլայիր՝ մենք չ'իքո՞ր գար:**

**Հ. —** Տիկին՝ Քերոման, ճակատագիրը և չար թշնամին են մեզ ցրել աշխարհով մեկ՝ մի մասին Ամերիկա, մի մասին՝ Ռուսաստան, Եվրոպա, Կանադա, Ավստրալիա, քայց մենք տարբերություն չենք դնում, քե հայր ուրտեղ է ապրում՝ հայրենիքը՛նմ, քե՛՞ Միկություն: Կա հավաքական հայություն գիտակցություն, որ մեզ համախմբում է ազգային միասնական խնդիրների շուրջ, և մենք հայրենակի ենք հասել միայն այն ժամանակ, երբ միավորել ենք մեր բոլոր ուժերը: Տես՝ ո՞ր, ես կ'ըստապական գործիչ չեմ Չեզ մնամ, քաղաքականություն չեմ զբաղվում, քայց քու լինում մի բան. մենք ունենք մեկ հայրենիք, միասնական մեկ ժողովուրդ և ազգային միասնական երազանքներ: Որ քաղառուսում ուժ. ոո նուսանեոսու-

նր ազգություն և հայրենակներ գործ է կատարում, նպաստում է մեր առաջադիմությանն ու հզորացմանը՝ ես ներքուստ համակրում եմ այդ կուսակցությանը: Կարծում եմ՝ ամեն օրինավոր հայ այսպես պիտի մտածի և ոչ քե անձնական քարեկեցության և շահախնդրական նկատառումներով քափափո կուսակցությունից կուսակցություն:

**Պ. — Աղիկա շատ վտանգավոր բան է մամավանդ իդեոլոգիի՝ գաղափարական տեսակետից: Ամերիկայի մեջ ալ անոնք կան՝ դեմոկրատիկ, հանրապետական և այլն: Բայց ես կուսակցական չեմ եղեր ու չեմ լինի. միայն կ'նայեմ՝ ո՞վ կաշխատի մարտը, ազնիվ ու շիտակ՝ կհամագործակցեմ անոր: Ժողովուրդը և Հայրենիքն են կարևորը և ոչ քե տարաբանված կուսակցությունները:**

**Հ. —** Անձնական մի հարց պիտի տամ: Ինչպե՞ս է Չեր ամուսին Չերջը. ես նրան միայն մեկ անգամ եմ հանդիպել Հայաստանում, շատ համակրելի անձնավորություն է: Միասին ճանապարհորդեցիք, հասանք Արաբիա փի: Նա ինչպե՞ս է նայում Չեր հայաստանյան գործունեությանը, Չեզ օգնո՞ւմ է, քե՛՞ խանգարում:

**Պ. — Միայն օգնում է, այլպես այստեղ չ'ի լինի այսօր: Բայց քիչ առաջ հիշած այդ շարքատակի ղեկիցից անոր ալ սիրտը կտուրված է:**

**Հ. —** Մեր ժողովրդական մեծ եղբայրներից մեկը՝ Ջիվանին, մի հրաշալի երգ ունի՝

**Ա՛զգ իմ, որքան նկուն մնա՛ս: Միրոս բեզանից չի գատվի:**

Հայի սիրտը որքան էլ կտուրված լինի, իր հայրենիքից երես չի դարձնի: Ուզում եմ հույս հայտնել, որ այդ դատը վերջանալուց հետո Չեզ հետ միասին Չերջն էլ Հայաստան պիտի գա: Մենք երազվուտ ժողովուրդ ենք, այսպիսի մեծ անուր պետականություն, հզոր, քարեկեցիկ Հայաս-

տանի երազանքով: Դա մաս Չերջի ու բոլոր սկյուրոքահայերի երազանքն է:

Դուք, խոստովանե՛ք, Հայաստանն ավելի սիրեցիք՝ անձնաբեր տեսնելով, հիմա ուր էլ որ գնաք՝ Չեր ուշքն ու միարք, Չեր հոգին այստեղ են:

**Պ. — Խոստովանիմ՝ այո՛, այդպես է: Հայաստանի և Արցախի հայերը հրաշք մարդիկ են, ազնիվ, հայասներ, կյուրաքեր. վստա պայաններն ու հանգամանակները չեն աղարտած անունը նկարագրի վեհությունը: Հենց դա էլ բազմապատկում է իմ սերը: Դեռ մեր տեղ հասած՝ մտածում եմ՝ երբ եմ Հայրենիք վերադառնալու:**

**Հ. —** Այս լավ տրամադրությունը էլ թույլ տվեք ավարտել մեր գրախոս՝ կրկին Հայաստանում հանդիպելու հույսով: Մադում եմ, որ ամեն անգամ, երբ գաք, տեսնեք, որ մի քանի ստաջ ենք գնացել, մի լավ բան մեր երկրում ավելացել է, կյանքն ավելի զեղեցկացել է: Մեր առաջընթացի մեջ կա Չեր և Չեզ մնամ գերագին և հայորդիների մեծ ներդրումը:

Մեր կյանքի մնացած մասն էլ մենք միասին ենք քայլելու մեր ազգային երազների ճանապարհով: Եվ այս համաձայնություն Չերջի սիրտը թույլ չկտորվի. արդարությունը, հույս ունեմ, կհաղթանակի, և Չերջն էլ այստեղևն Չեզ հետ, մյուս հայորդիների հետ միասին կգա Հայաստան՝ հպարտանալու մեր ձեռքբերումներով, ապրելու իզոք ու կայուն, քարեզական հայրենիքի վայելքը:

Ուրախ ու հպարտ ենք Չեր հրաշալի գոյությունը: Այսօր Հայաստանն ու հայրենիքը Չեզ մնամ հայորդիների նվիրումով են կանգուն: Թույլ տվեք շնորհակալություն հայտնել հաճե՛լի ու բուխունակալից գրույցի համար: Նոր քարի վերադարձ Հայաստան:

*Հարցազրույցը վարել՝  
ՄԱՍՎԷԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ*

# ԳԻՐՔ ՀԻՇԱՏԱԿԱՅ

**«Գուրգեն Մելիքյանի՝ Բաշաթաղի բազմազգային ընտանիքների հիմնադրամի»** հովանավորությամբ վերջին տարիներին արդեն լույս են տեսել հայագիտական ու պատմաձևավորաբան արժեք ներկայացնող մի շարք գրքեր։ Տպագրվել է նաև լուսագրող Գոհար Մարտիրոսյանի «Այբուրու բանածնը» խորագրով երկրորդ գիրքը, որը ներկայացնում է, Արցախի ազատագրության համար նստատակված և 99 հերոս հայորդիների։ Գրքի՝ հիմնադրամի խորհրդի առաջարկով հանձնում ենք ընթերցողի ուշադրությանը



Պատմությունը՝ մտախի բե հետավոր, մարդիկ են կերտում և հանձնում սերունդներին։ Խաչիկ Դաշտմենի «Մանչպարաների կանգը» վիպապոեմ կերպավորված 19-րդ դարավարտի ու 20-րդ դարակազմի «ազգի մատաղ» ինչոյայինների՝ անճնագոհ պատմամարտիկների օրհնակելի սերունդը, բարեբախտաբար, ոչ միայն վերջինը չեղավ, այլև, 20-րդ դարավերջին ունեցավ իր արժանավոր ու փառավոր հաջորդը։ Արցախյան ազատամարտի հերոսական սերունդն առավել կզմայակերպված էր, բանինաց և, որ անչափ կարևոր է, նպատակասլաց էր մարտական բոլոր գործողություններում։

Մեզ պարտադրված պատերազմում խորհրդային ու արտասահմանյան արդիական զենքերով մինչև ատամները զինված ազդերների ու վարձկանների դեմ նախապես որսորչական հարցաններով անճնվարտ կողով փորքի ջոկատներից էր պայան կանչով ռազմադարձ մեկնած կամավորներից կազմավորվեց Արցախի ազատագրության բանակը, որը գործում էր համադրված ու խելզելի, հասնաչ զիվում բշմամտ լույս զենքերով ու մարտական մեքենաներով։ Նախնիների գերազանցված նպատակադրումները նոր սերունդն արժեն համալրել էր չար մեղքի ստոր հանձագործակցություն բռնազավթված մեր հայրենիքի ազատագրության, միլիտանտոր ամենը գեներել վրեժի և սնխկան պաշարի արդարադրության գիտակցությունը։

Տերյանցի (Նու հախետ եղար զոծ, ամարտու վկա) ու Չուբնցիցի (Ինչպես դարեր առաջ վկան Նարեկացին) հետո ամեն «մտառելի» էինք վկա բառի համուն սրբազան նպատակ ու գաղափարի մատաստիկ, մարտիրոս, կամավոր զոծ իմաստները։ Նոր սերունդը դրանք վերիչել և կենսագործեց իր անկարելի բխագող սխրամբերով, գրեց հայոց հարթսանկների պատմության մի նոր փառավոր մատչյան՝ ապացուցելով, որ ինքը Արցախը Մեղրուկ, Արարայի, Անդրամիկի, Կուրց Չառչի, Նխիջու Դումանի, Ջևու, Արան Մանուկյանի, Միխիկյանի, Փրոքոյանների, Գրոյի ու Նժդեխի սերունդի ազգն էր շարունակությունն է և վերածնվել է պատմական պահի բեկարամբով։

Բողոնիներին հաջողվեց Առաջին աշխարհամարտում պարտված ցարական Ռուսաստանի փլուստվեների վրա, ու ինչ ժողովրդներին պատմական տարածքների քննառ բռնակցումով կատարել խորհրդային կայսրությանկոտորումը։ Նրա ճակտորման առաջին իսկ տարիներին, շրջանցելով եղծնազարկ եղած հայության ազգային շանթեր ու իրա վտերները, բուրբ-բողոնիկյան համամայնագրերով հայիքի բնօրրան գոյը Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանում զարկ մտալ 1921 թ. Մայիսկայի ու Կրպի պայմանագրերով մեքրաբերվեցին քենազական Թորոսյանի, իսկ հայոց հիմնավուղը Նախիջևանը տրվեց տարածաշրջանում նոր-նոր ի հայտ եկած Անդրեջան քենառ հողորդությունի պետությունը՝ «ստանց երրորդ պետության հանճնելով իրավունքի» հեռախար ու մեզն ճակտերպամբ։ Այնինքն, բողոնկյան Կալբ-յուրդի 1923 թ. հունիսի 4-ի որոշմամբ էլ նույն Անդրեջանին

հանճնվեց Արցախը։ Հայաստանի տարածքային այս անարդար կորուստները ճակատագրական էին հայության համար։ Բռնության իր ծարիրներից տեղահանված արևմտահայությունը դարձավ հայրենազուրկ ու տարբեր երկրներում ճակտրվեց հայկական փխուրդը, իսկ խորհրդային պետության տոմսայիններում աշխարհի այդի առաջ Նախիջևանն ամբողջությամբ հայաբախվեց, հայաբեք բոլոր իուշարժանները բարբարոսաբար ոչնչացվեցին, ու ղեռ հիմա էլ բերում են այնտեղից հայության բոլոր հետքերը։ Նույն ճակատագրին էր արժանանալու մեկ նույն Անդրեջանի ողորմածության հանճնված Արցախը, երբ խորհրդային իշխանություն մայրամուտին չծավալվեց արցախյան համաժողովրդական շարժումը։ Կայսերականությունը չխաբեց արցախահայության ինքնուրույան իրավունքը, չուզեց չռնել իր իսկ գործած պատմական սխաղը և Արցախը չուղեմսխաղեց Հայաստանին։ Ընդհակառակը, քուլ տվեց, որ Մուսկոյիքի ներժանգործության, Բարձի, Կիրովպարտի ու այլ վայրերի հայության բռնի տեղահանումով՝ 20-րդ դարավերջին իրականացնել նոր եղեռն, Արցախի շրջափակումով, «Օղախ քորոնդության փորճեց սատտել իր ազգային իրավունքների ու արժանապատվության համար ոտքի եղած հայությանը»։

Կայսերականություն պիտուզում Ինճ Հայաստանի անկախացումն ու Արցախի օրհնական ինքնորոշումն ուղեկցվեցին Անդրեջանի կողմից պարտադրված պատերազմով, որին մասնակցեցին իսկ ժողովրդի լավագույն զավակները։ Պատմական պահի ճիշտ զգագրությունը նորեր հիշեցին հիերի կարգախոսող՝

**Երբ հայ ազգին ջրմեռնիմ,  
Հըբբ ինչո՞ր ճնվեր իմ...**

Ինքնորոշված Արցախը բռնազավթելու, հայության ազատաիրական ճգագտմներն արյան ճեք ինքերուն բշմամտ մուղցելի դեմ եղավ ու լեզեմեղապով ազատամարտիկների նոր սերունդը՝ հին է ուր անմեռներով՝ Մոսքու ու Լեռնից, Թաթուր ու Կարդան, Բեկոր Աշուտ ու Դեղ, Արարու ու Պետու...

Այս սերունդը տարավ անկարելի հայրենակները, զրավեց Ըուշին, ազատագրեց Արցախն ու նրա անկախությունը գոտին։ Ըատերն իրենց կայանը դրեցին հայրենիքի զոհանուղանք, գոհվեցին կամ աննեռ կորստ, կոպեցին, որ ապրեին, զոհվեցին, որ պահպանվի ազատագրված Արցախն իր պետականությունը, որ հարատևեն ներանմախ Հայաստանի Հանրապետությունն ու նրա խաղաղ բարեկեցությունը։

Փա՛ր որ ու պատիվ պարող իրավան հերոսներին, բայց և հավիտենական հարգարք ու խոնարհուն Նշարություն ու այլու ամփոփված զոհվածների ու անգերեզման հերոսների, որոնց անմահ հիշատակին է ճոված « Գործերն Մելիքյանի՝ Բաշաթաղի բազմազգային ընտանիքների հիմնադրամի» միջոցներով իրատարակված հերոսապատում այս մատչյանը։



**2007թ. դեկտեմբերի 9-ին Արկադի և Իրա Հովհաննիսյանների  
դասընդ կազմակերպված դրամահավաք  
Գլխնդե, Կալիֆորնիա**

1	Արրահամյան ժակլին	150	Ծառերի ծրագիր
2	Արրահամյան Վահիկ և Ցողիկ	200	Ուսման ծրագիր
3	Աղազադյան Գեյնև և Ալբերտ	90	Հուշանվերների ծրագիր
4	Ալադադի Վահան	300	Ուսման ծրագիր
5	Ալեքսանդրյան Իրինա	150	Հուշանվերների ծրագիր
6	Ալեքսանդրյան Իրինա	140	Ծառերի ծրագիր
7	Ալլահդադի Մալեբսեթ	500	Խեմ ծրագիր
8	Ալթիբարմաքյան Զակոբ և Մարի	2898	Գրքերի և ուսման ծր.
9	Ask Gold Company Inc	250	Ուսման ծրագիր
10	Armenian Relief Socsety La Crecsenta Dance Group	190	Ծառերի ծրագիր
11	Բայյան Րաֆֆի	120	Գրքերի ծրագիր
12	Բայյան Րաֆֆի	200	Ծառերի ծրագիր
13	Բարսեղյան Ամժելա/Aerotech Business/	75	Գրքերի ծրագիր
14	Բարսեղյան Ամժելա/Aerotech Business/	200	Ուսման ծրագիր
15	Բաշմակյան ընտանիք	1000	Ուսման ծրագիր
16	Bern Jewelry	300	Ուսման ծրագիր
17	C.Z. Star Jewelry Inc	500	Խեմ ծրագիր
18	Չիֆտեյան Թորոս	100	Ծառերի ծրագիր
19	Չիֆտեյան Թորոս	100	Ծառերի ծրագիր
20	Ղալիբյան Հովհաննես և Աննա	500	Խեմ ծրագիր
21	Diamond Craft Corp.	200	Ծառերի ծրագիր
22	Քոհեն Ռոզմարի	25	Գրքերի ծրագիր
23	Քոհեն Ռոզմարի	100	Ծառերի ծրագիր
24	Չարչյան Նազելի	500	Խեմ ծրագիր
25	Ջարգարյան Վիզեն	1000	Խեմ ծրագիր
26	Ջարգարյան Վիզեն	55	Հուշանվերների ծրագիր
27	Գալստամյան Ռիտա	80	Հուշանվերների ծրագիր
28	Գալստամյան Արթուր և Ստելլա	200	Ուսման ծրագիր
29	Garo Jewellery Inc	200	Ծառերի ծրագիր
30	Ղարախանյան Զայկ և Զլար	400	Ուսման ծրագիր
31	Հակոբյան Ռուբեն	1000	Ուսման ծրագիր
32	Հարությունյան Բելլա	100	Ծառերի ծրագիր
33	Հովհաննիսյան Արսինե և Արմեն	115	Հուշանվերների ծրագիր
34	Հովհաննիսյան Արսինե և Արմեն	500	Ծառերի ծրագիր
35	Ջանգոզյան Արեգ և Նանե	120	Գրքերի ծրագիր
36	Ջանգոզյան Վարդան և Աննա	750	Ուսման ծրագիր
37	Քանյան Նիք և Մերի	5000	Արտաշատ ք.պետում. և գրքերի ծր.
38	Կազանչյան Վահե և Սերա	1000	Խեմ ծրագիր
39	Կազանչյան Վահե և Սերա	390	Հուշանվերների ծրագիր
40	Քեչիշյան Մարտիրոս և Թերեզա	1000	Խեմ ծրագիր
41	Խաչատրուրյան Աիդա և Արամ	500	Ուսման ծրագիր
42	Քիրամիսյան Հովհաննես և Ծովհան	200	Ծառերի ծրագիր

43	Քոլոգնոմոս Ալեքս և Մեդեա	100	Հուշանվերների ծրագիր
44	Սահնուզյան Միհրան և Աճի	700	Բերծորի մանկապարտեզի ծր.
45	Մաշիկյան Ջորջ և Թամար	1000	ԽԵՄ ծրագիր և ուսմ.ծր.
46	Սարաշյան Լևոն	300	ԽԵՄ ծրագիր
47	Սարտին Ջարեհ	400	ԽԵՄ ծրագիր
48	Մինասյան Հիլդա	400	ԽԵՄ ծրագիր
49	Մինասյան Հիլդա	200	Ծառերի ծրագիր
50	Մկրտչյան Հակոբ և Անճելա	3000	
51	Մուշոյան Հակոբ և Մերի	500	Ուսման ծրագիր
52	Նահապետյան Մաղլեն	500	ԽԵՄ ծրագիր
53	Նահապետյան Մարկ	4000	Վայքի պեղումն.ծր.
54	Nareg Jewelry	100	Ծառերի ծրագիր
55	Նազարյան Շահեն	300	Ծառերի ծրագիր
56	New Gold Manufacturing Inc	300	Ուսման ծրագիր
57	Հովհաննիսյան ընտանիք	10000	Պեղումների և ուսմ.ծր.
58	Հովհաննիսյան Մայք	165	Հուշանվերների ծրագիր
59	Հովհաննիսյան Էրիկ և Ադրինա	150	Հուշանվերների ծրագիր
60	Հովհաննիսյան Նաիրա	200	Հուշանվերների ծրագիր
61	Փափայանց Շիլա	690	Հուշանվերների ծրագիր
62	Փափայանց Շիլա	3000	Ուսման ծրագիր
63	Պետրոսյան Գրիգոր և Սեդա	100	Ծառերի ծրագիր
64	Փիրցանյան Մուրեն	500	ԽԵՄ ծրագիր
65	Սահակյան Անիկ	50	Ծառերի ծրագիր
66	Սարաֆոլու Էդիկ	500	ԽԵՄ ծրագիր
67	Սարուխանյան Մարիա	240	Հուշանվերների ծրագիր
68	Սերոբյան Լուսինե	400	ԽԵՄ ծրագիր
69	Shahbazian Construction company	500	ԽԵՄ ծրագիր
70	Թորոսյան Ռոստոմ և Հասմիկ	400	ԽԵՄ ծրագիր
71	Թովմասյան Աշխեն	200	Ուսման և ծառերի ծր.
72	Թովմասյան Աշխեն	255	Հուշանվերների ծրագիր
73	Թումանյան Ներսես	500	ԽԵՄ ծրագիր
74	Թուրունջյան Հակոբ ընտանիք	500	ԽԵՄ ծրագիր
75	Ուրուհ Կահիկ և Արմավ	250	Ուսման ծրագիր
76	Vahagn Setian Charitable Foundation	1000	ԽԵՄ ծրագիր
77	Վարդանյան Հարրի և Շուշան	300	Ծառերի ծրագիր
78	Վարդանյան Մուրեն և Օլգա	300	Ծառերի ծրագիր
79	Վիկտոր Գրեգորի և Էլլա	1200	ԽԵՄ ծրագիր
80	Եղյանց Արտաշես և Հասմիկ	400	Ծառերի ծրագիր
81	Եղյանց Ջորջ և Մաթիլդա	500	ԽԵՄ ծրագիր
82	Ջաքարյան Արթուր	100	Ծառերի ծրագիր
83	Ծառուկյան Միմի և Ծատուրյան Ժամեստ	400	ԽԵՄ ծրագիր
ԸՆԴՀԱՄԵՆԸ		55998	

## 2007-2008 ու. տարվա 2-րդ կիսամյակի փոխանցումներ

h/h	Ազգանուն, անուն	Ֆակուլտետ	կուրսը բաժինը	Գումարի չափը
1	Պողոսյան Քրիստինե	արևելագիտ.	1 թուրք.	112000
2	Գեղամյան Վարուժան	արևելագիտ.	1 թուրք.	125000
3	Սամիկոնյան Ռաֆայել	արևելագիտ.	1	225000
4	Հովհաննիսյան Լիլիթ	արևելագիտ.	1 իրան.	112000
5	Պողոսյան Գևորգ	արևելագիտ.	3 իրան.	102500
6	Մեհրաբյան Արսեն	արևելագիտ.	2 թուրք.	102500
7	Դավթյան Սահակ	արևելագիտ.	2 իրան.	100000
8	Համբարձումյան Սոնա	արևելագիտ.	2 իրան.	100000
9	Վարդանյան Գոռ	արևելագիտ.	3 թուրք.	105000
10	Պետրյան Ստյոպա	արևելագիտ.	4 թուրք.	205000
11	Հախումազարյան Մարիամ	արևելագիտ.	4 արաբ.	100000
12	Մուրադյան Իվետտա	արևելագիտ.	մագ.1թուրք.	150000
13	Հաքեշյան Արթուր	արևելագիտ.	մագ.1 իրան.	225000
14	Մեքունյան Ռուզաննա	արևելագիտ.	մագ.1արաբ.	225000
15	Սաֆարյան Արփինե	արևելագիտ.	մագ.2 արաբ.	100000
16	Հարությունյան Տաթևիկ	արևելագիտ.	մագ.2 արաբ.	100000
17	Թամոյան Մահմուդ	արևելագիտ.	մագ.2արաբ.	75000
18	Սմբատյան Սաբենիկ	արևելագիտ.	մագ.2իրան.	105000
19	Ղարաբաղյան ԱՆԻ	արևելագիտ.	մագ.2 արաբ.	90000
20	Իսպիրյան Անդրանիկ	արևելագիտ.	մագ.2 թուրք.	205000
21	Խաչատրյան Տիրան	ռոմանագերմ.	2 անգլ.	60000
22	Արզանյան Սիիրան	ռոմանագերմ.	2 անգլ.	60000
23	Փարսադանյան Արմինե	ռոմանագերմ.	2 անգլ.	60000
24	Դանիելյան Սուսաննա	ինֆորմ.և կիր.մաթ.	1	90000
25	Շահումյան Վարդանուշ	ինֆորմ.և կիր.մաթ.	1	90000
26	Հունգանյան Երանուհի	ինֆորմ.և կիր.մաթ.	մագ.2	90000
27	Սիրելկանյան Էլիզա	միջազգ. հարաբ.	1/հեռակա/	50000
28	Սարգսյան Մանե	միջազգ. հարաբ.	1	90000
29	Կոչկանյան Սոնա	ակտուար մաթեմ.	2	100000
30	Հակոբյան Ստեփան	կիրառ. մաթեմ.	մագ.1	175000
31	Հակոբյան Արևիկ	հոգեբան.	2	175000
32	Գուլյան Գարեգին	կիրառ. մաթեմ.	մագ.2	50000
33	Երեմյան Էմմա	քիմիական	3	100000
34	Վարդանյան Սյուզաննա	քիմիական	2 ղեղագործ.	150000
35	Ռուստամյան Մարինե	պատմության	1 /հեռակա/	100000
36	Գրիգորյան ԱՆԻ	պատմության	1 արվեստ.	165000
37	Հարությունյան Վլադիմիր	պատմության	2	140000
38	Հակոբյան Դիանա	պատմության	2	100000
39	Ջիլավյան Հրաչիկ	իրավագիտ.	4	165000
40	Սարգսյան Աննա	իրավագիտ.	մագ.2	100000
41	Առուստամյան Լիլիթ	բանասիր.	1 /հեռակա/	80000
42	Առաքելյան Մաղլենա	փիլ.և հոգ.	4	150000
	ԸՆԴՀԱՆՈՒՐ			5004000



«Գուրգեն Մելիքյանի» Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»  
ԽՆԱ ԾՐԱԳԻՐ

ՇԱՐՈՒՆԱԿՆԵՒ

131.	Արապիճյան Արման Հարությունյան Էլմիրա	Ծիծեռնավանքի հովիվը (6 երեխա)	(2-րդ կով)	Բալաբանյան Մայք
132.	Դավաթյան Սամվել Դավաթյան Անահիտ	ք.Բերձոր /7 երեխա/	827	Ալեքսանյան Թոմիկ
133.	Դանիելյան Մելսիկ Գևորգյան Ռուզաննա	գ.Մոշաթաղ / 7 երեխա/	03129 /2-րդ կով/	Արրահամյան Յողիկ և Վահիկ
134.	Հակոբյան Վալերիկ Պողոսյան Գոհար	գ.Աղանուս / 8 երեխա/	03628 /2-րդ կով/	Դարախանյան Հայկ և Քլար
135.	Ալեքսանյան Գևորգ Դադիբյան Անուշ	գ.Շիրակ 8 երեխա	/2-րդ կով/	Աղազարյան Գրիշ
136.	Անտոնյան Արա Հակոբյան Նարինե	գ. Արծվաշեն 5 երեխա	327646	Պիտեր Կարապետ (Քրիստինե)
137.	Արդոյան Համետ Հովհաննիսյան Թամարա	գ. Լորաշենիկ / 5 երեխա/	03070 /2-րդ կով/	Ասլանյան Իռեն
138.	Դազարյան Ներսես Նազուխյանյան Գայանե	գ.Աղանուս 5 երեխա	327645	Չոբանյան Արամ և Արդա
139.	Եգորյան Հարություն Եգորյան Վերգինե	գ.Գանձա 4 երեխա	327647	Մաշիկյան Ջորջ
140.	Զաքարյան Թուման Գրիգորյան Մարինե	գ. Ծիծեռնավանք / 8 երեխա/	3571 /2-րդ կով/	Բրոնոզյան Հարություն
141.	Նազարյան Արա Մանուկյան Կարինե	գ. Քարեզահ / 8 երեխա/	03345 /2-րդ կով/	Ուխտենց Ֆլոր և Մուրադ
142.	Մազմանյան Միեր Արամյան Քրիստինե	ք.Բերձոր / 5 երեխա/	07425	Յախշիբեկյան Արտավազ
143.	Դանիելյան Մելսիկ Գևորգյան Ռուզաննա	գ. Մոշաթաղ /7 երեխա/	03129 / 2-րդ կով/	Զարյան Բաղդասար և Ռեբիկ
144.	Հակոբյան Գառնիկ Մաթևոսյան Գայանե	ք. Բերձոր / 5 երեխա/	849	Յուսուֆյան Միքայել
145.	Նազարյան Արա Մանուկյան Կարինե	գ. Քարեզահ /8 երեխա/	03345 / 2-րդ կով/	Ալեքսանյան Թոմիկ
146.	Հակոբյան Մելսիկ Անյան Քրիստինե	ք. Բերձոր /7 երեխա/	00639 / 2-րդ կով/	Գալստանյան Արթուր և Ստելլա
147.	Դավաթյան Սամվել Դավաթյան Անահիտ	գ.Ապարան /7 երեխա/	3070 / 2-րդ կով/	Յախշիբեկյան Արտավազ
148.	Ալեքսանյան Գևորգ Ալեքսանյան Անուշ	գ.Շիրակ /8 երեխա/	03253 / 2-րդ կով/	Սեթյան Վահագն
149.	Մաթևոսյան Գարիկ Մովսիսյան Թամարա	գ. Ուռեկան /3 երեխա/ հաշմ.		Գրիգորյան Կարլ և Նազիկ
150.	Ավետյան Թելման Գրիգորյան Հասմիկ	գ. Արտաշավի / 5 երեխա/	03270	Շիրիկյան Հարրի
151.	Հայրապետյան Հարություն Սայան Արևիկ	գ. Գողթանիկ / 5 երեխա/		Դավիթյան Հովհաննես
152.	Հակոբջանյան Արարատ Մարդյան Ալինա	ք. Կովսական / 5 երեխա/		Ալի Յազդի/Գերմանիա/

### Երկու նշխար Հովհաննես Շիրազից

*Ժայռից ջրվեժը փշրվում է ցած,  
 Անդրդում մահով՝ կապում ծիածան-  
 Մանի որ կյանն մի վայրկյան է լուկ,  
 Եվ իմ դեմ աշխարհն՝ հակփռեմկան,  
 Մի բան է տեղում սիրտս ամամե,  
 Քեկուզ մի վայրկյան լինել ծիածան,  
 Մի ծայրեծայր աշխարհը՝ րկեք  
 Ու հեղեղությամբ աշխարհը լցնեք  
 Քեկուզ մի վայրկյան,  
 Քեկուզ մի վայրկյան...*

\*\*\*

*Իմ մայր ազ ին բեկուզ ի՛նձն մեր պես ծնած լինեի,  
 Աստվածային ամբոսների կաթով ամած լինեի,  
 Ե՛ս լինեի բեկուզ ծնած անմահությամբ իմ հայրոց՝  
 Եղի՛ պիտի պարտմ մնայի՝բեկուզ Աստվա՛ծ լինեի:*

## ԽԱՉՎԵՐԱՅ ՏՈՆԸ ... ՄԵՎԱՆԻ ՎՐԱ ԿԱՄ ԲԱՐԵԳՈՐԾԻ ՄԵՇԱՐՈՒՄԸ

Հին սովորոյթ է. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ տարվա հինգերորդ ու վերջին տաղավար տոնը՝ Մուրթ Խաչը կամ Խաչվերացը, սովորաբար ուղեկցվում է մեռելոցով՝ Սուրբ և անմահ Պատարագով, հարազատների, բարեկամների ու ընկերների՝ զերեզմանոց այցելությանը, ծաղիկներ դնելով ու խոնկ ծխելով, հին կամ նորոգ հանգուցյալների հուշը, կյանքի հետաքրքիր դրվագները, կատարած լավ ու քարի գործերը վերարծարելով ու արժևորելով:



Հազար ողորմի Սուրբ Փառայանցին...

Ամերիկահայ նշանավոր քարերգուծ Սյուր Փափայանցը, արին այսօր հիշում են որպես արցախյան հերոսամարտում հայոց բանակին կայսի միջոցներով, հնարավոր ամեն ինչով օգնողի, Երևանի պետական համալսարանում՝ որպես ժամանակակից սարքավորումներով ատամնաքուժարանի նվիրատուի, ուսանողական հիմնադրած ստեղծողի, հայոց մայր բուռի և Ստեփանակերտի ուսանողների՝ Ար-

ցախում մի բանի անգամ համատեղ իրականացրած ծառատունիկի իռվանավորողի, Արցախում, ազատագրված տարածքներում և Ջալալթում տասնյակ դպրոցներ նորոգողի,՝ հայրենասիրության ու ազգամիլիտրոջան իսկական մարմնացում էր: Այդ քաջաճիկ հայտորին, իր իրանդուհի սիկնոց՝ «100 տուկտանոց հայտնի» Շիրախի հետ միասին (ի դեպ, նրա պարամոցից կախ ոսկյա մանյակի վրա է գրված «ես 100 տուկտով հայ եմ») Ելինել չի խնայել ներուժյան մեջ հայտնված իր ազգակիցներին նյութական ու քարոյական օգնություն հասցնելու, Հայաստանի ավելի բարգավաճ դարձնելու, համար: Ցավոք, նա անհկնկալ ու վաղ հեռացավ կյանքից՝ կիսկատար բողմելով շատ ազնիվ ծրագրեր ու դեռ չիրագործված մտահղացումներ, որոնք այստեղևու կատարելու պատրաստակամության 1 դրսեղումն նրա գերազնիվ այրին՝ Շիրամ:

Զգայուն, զգաստ ու զգաստացնող անհատակա-նություն էր Սերժ Փափայանցը, չէր դրժում ոչ Արցախին, ո՛չ էլ հայրության վերաբերող արև. խստում: Սիրահարված էր հայ հողին, հայոց ողջ մշակույթին և մանավանդ երգին ու բանաստեղծությանը: Ընդհանրապես լռակյաց կամ քշախտս (իր անելիքն իմացող ու գործող մարդը սովորաբար չի շատախոսում)՝ դրանք ունկնդրում էր երանուջամբ ու գրեթե մանկական իրժվանքով: Գրեթե ամեն առիթով հիշում ու հիշեցնում էր Հովի. Շիրազի «Վերջին իրժ» բանահանդուքայինը և կրկնում հատկապես այն տառերը, որոնք վերաբերում են հանգուցյայի յոթ բուս մարմնամոխիլը Հայաստանի «անբուռ յոթ կողմերը» շաղ

տալուն: Իրոք, մեծ էր ներգործությունն այս բանաստեղծության, որ ամեն անգամ նա ամկնալուսում էր հաճույքով ու հուզմունքով և պարտավարեցնում էր կյանք.



*Այս մի պտղունց խումկն էլ Մերժի փեսա  
Կարեն Գրիգորյանի և մյուս բոլոր իսպ մեջեջյալների  
համար...*

*...Առաջին բուռն համասփռեր կրծքին բանտված Մասիսի,  
Որ խառնվեն իր մեծ սրտին՝ հովանա սիրտն իմ հույսի:*

*Երկրորդ բուռն լուռ շա'ղ տվիք մայր Արաբսի սրտի մեջ,  
Որ հավանա մոխրին մեջ էլ՝ կարոտապարզ սիրտս խեղճ:*

*Երրորդ բուռն տարի'ք ցրեք Արաբսաղի լեռների,  
Որ մտաբացի ծաղկունք դասնամ պանդուխտ  
հողի ճեռներին...*

*Մրտին մոխրի չորրորդ բուռն տարե'ք ծովակն ի Վանա,  
Որ կարտեից մեռած սիրտս կնճղանանա, հովանա:*

*Հինգերորդ բուռն իմ Տարոմի դաշտերի մեջ շաղ տվեք,  
Որ հինգ հազար դար էլ լայնի մոխրիտ մեջ սիրտս հեզ:*

*Վեցերորդ բուռն հույսով տարե'ք, ցրեք Սասնա լեռնկին,  
Որ նոր Սասնա էպոս դառնա, հատմի գալիք դարերին...*

Իր այնքա՛ն սիրած Հայաստանում և Արցախում միշտ լինելու բուռն փափագն էր րեպարյե, որ Փափայանցը վերջին ցամախություն հայտնե՞ր իր աճյունի մեծ մասն Արցախում բաղկու և մի բուռ էլ Սևանում ցամախու համար: Ամերիկայից Սերժ Փափայանցի՝ Մուրր Խաչի տոմն իրականացնելու համար էին Հայաստան էին եկել հանգուցյալի այրին՝ Շիրա Փափայանցը, բուրյո՛ր՝ Էյա Գրիգորյանը, այլ հարազատներ և մտերիներ: Եվ քնակում է, որ արդեն Սևանին ձուլված Մերժի Մուրր Խաչի տոմն նրանք պիտի կատարեին Սևանում՝ ծաղկեպսակ ու ծաղիկներ նետելով աղիքների մեջ և խումկ ծխելով նավի վրա:



*Ուշադրություն, նկարում են...*

Ինչպես միշտ՝ նրանց հետ էր Մերժին և նրա ընտանիքին ամենամտերին Գորգեն Մեղքյանն իր տիկնոջ՝ Լաուրայի, ու դստեր՝ Մերիի ուղեկցությամբ:



*Ծաղիկնե՛ր, ծաղիկնե՛ր...*

Շուք երեք մետր բարձրացած Սևանը բոլորովին այլ տեսք ուներ. մամոռները վերացել էին, ջուրը՝ հստակվել: Մի պայծառ տխրություն էր հասնակել նավի վրա գտնվողներին, որոնք պատրաստվում էին իրոք հուզիչ քարաբողբայան՝ ծաղիկ նետելու և խումկ ծխելու: Օրհնակն խապեր հեշեցին, և քիչ անց հիշատակի ծաղկեպսակն ու ծաղկեփճեղը լուռում էին աղիքների մեջ՝ կարծես հավաստելով, որ իրականացել է Մերժի՝ հայրենի հող ու ջրին խառնվելու կրագանքը, և օրհնանքի ու մեծարման խապերը, հայոց հուզվող երգերի մեղեդիների հետ միասին, խառնվում էին աղիքների տխրորախ շառային:



### Սփյուռքահայ բարեգործների ևս մեկ օրինակելի ձեռնարկ

## ՆՈՐԱՀԱՅՑ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՉՈՐՈՒՄ



ՆԻԿ ԵՎ ՄԵՐԻ ԶԱՆՅԱՆՆԵՐ

2006-2007թթ. ՀՀ ԳԱՀ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը Նիկ և Մերի Զանյանների հովանավորած «Վայոց ձորի հուշարձանների ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում գիտական հետազոտություններ և քարտեզագրում է կատարել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս և Մուլեմա գետերի հովիտների պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններում: Հետազոտության համար ընտրվել էր մարզային կենտրոն Եղեգնաձոր քաղաքի մերձակայքից մինչև միջնադարյան նշանավոր հուշարձան Սելիմի քարավանատունն ընկած հատվածի հուշարձանների ուսումնասիրությունը: Արշավախումբը երեք ամիս տևողությամբ հետազոտել է վերոհիշյալ տարածքի հնավայրերը՝ շուրջ 25 կմ<sup>2</sup> տարածության վրա: Հայտնաբերվել են պատմական տարբեր ժամանակաշրջանների վերաբերող քնակատեղիներ և գյուղատեղեր, ամրոցներ, դամբարանադաշտեր, քազմաթիվ հուշակոթողներ, լրացումներ են կատարվել Վայոց ձորի հուշարձանների քարտեզի վրա: Զարտեզագրման աշխատանքներին զուգահեռ ուսումնասիրվել են Դվին-Պարտավ անտրական քարավանային ճանապարհի կարևորագույն հատվածներից մեկի՝ Վայոց ձորի հուշարձանների տարածքներում հայտնաբերված արքերեն և պարսկերեն արձանագրությունները (Սելիմի քարավանատուն, Գետափ, Ագարակաձորի կամուրջ, Գեղեվանք):

Նորահայտ հուշարձանների մեջ առաջին հերթին կարևորում ենք ուրարտական համալիրը շրջանի ամբողջահավաստեղիների արձանագրումն այս հատվածում, որոնց հնագիտական ուսումնասիրությունը հնարավորություն է տալ մեկնաբանելու մ.թ.ա. IX-VIII դդ. ուրարտական կտրակամերի կրմից դեպի հյուսիս և հյուսիսարևելք կատարած միաճումների որոշ մանրամասներ:

2007թ. աշնանը արշավախումբը մեկ ամիս տևողությամբ հնագիտական պեղումներ իրականացրեց վերը նշված հետախուզական աշխատանքների միջոցին հայտնաբերված հուշարձաններից մեկում՝ Գետափ ամրոցի տարածքում: Այն գտնվում է գյուղի հյուսիսային կողմում՝ նրանից 1.5 կմ հեռավորությամբ: Նախքան պեղումներն սկսելը կատարվեց հուշարձանի վերակառուցման հատվածների մաքսական չափազորությունը: Հուշարձանը գտնվում է 50 մ քառորոյուն ունեցող ձկաձորի մի բլրի վրա, որի զազաթի շուրջ 2000 մ<sup>2</sup> մակերեսին տեղադրված է ամրոցը կամ միջնաբերդը, որից դուրս՝ լամբերն ի վար, շուրջ 2 հա տարածության վրա տարածվում է բնակատեղին:



(նկ. 1):

Գետներն ընտարկումները ցույց են տալիս, որ հուշարձանը կառուցապատված է տեղաբնի տեխնոլոգիայով և օգտագործելու սկզբունքով: Պարիսպները դրվել են բլրի համեմատաբար հարթ զազաթին՝ հիմնականում հենվելով ժառոնեն մանենտների մաս:

Տեղանքի բնույթից ելնելով՝ պարիսպները կառուցապատվել են ըստ բլրի ժայռեղևն գագաթի քերտոյունների ու հարթությունների: Այն հատվածներում, որտեղ ժայռերը իրարից հեռու են, միջանկյալ ապահովությունը լցվել է քացուցիչ հիմք-հենապատով, հարթեցվել է մակերեսը՝ պարսպի այդ հատվածը գետեղելու համար: Որոշ հատվածներում էլ եղելվել են ժայռերի ամհարք հատվածները՝ պարիսպներն ուղիղ գծով դնելու նպատակով:



(նկ. 2):



(նկ. 3):



(նկ. 4):

Գետափի ամրոցում նայխանյան պեղումները կենտրոնացվեցին նրա կրափայտի հատվածում: Այստեղ բացվել է պարսպապատը՝ արտաքուստ 23 մետր երկարությամբ և 2.2-2.5 մ բարձրությամբ (նկ. 1):

Ուրարտական խեցեղենի մեջ առանձնանում են հաստապատ կարասները՝ լայն ուռուցիկ գտոններով, անոթների ուռուցիկ մասերում մերձգծված մեծ եռանկյունաձև մակերեսներով: Հատկապես առանձնանում է մի կարասի քեղորը, որի պարանոցից անցման հատվածում դրոշմված են հիերոգլիֆ նշաններ, որոնք ակներևաբար ցույց են տալիս այդ անոթի տարադրությունը (նկ. 3): Ուշագրավ է բարձր ուռուցի միջնորմավոր ձիքաձևը (նկ. 4):



(նկ. 5):

Խիստ բնորոշ են նաև գարեջրի սիգարաձև անոթների մասերը, որոնցից մեկի վրա անոթը քրծկալց առաջ փորագրվել է վարպետի խաչանձև նշան: Ձգալի քիվ են կազմում մեծ տաշտ - կոճերի և քրեղան բասերի բեկորները: Դրանցից երկուսը կրում են ուրարտական անոթների բնորոշ և հաճախ հանդիպող սկարաձև փորագիր նշաններ (նկ. 2):



(նկ. 6):

Հին հայկական խեցեղենը ներկայանում է իրանի և շուրթերի թագմատեսակ ձևավորմամբ աչքի ընկնող կարասների, թասերի մեջ (նկ. 5), ընթացանկների, կնձռների քեղորենի տեսականիով: Միջնաբերդի գագաթին պատահականոցներ բացվել է ուշ ժամանակաշրջանը դասարան ուղեկցող նյութերով (նկ. 6):

**ՀՈՒՍԻՅ ԱՆԷՔՈՆՅԱՆ**

ՀՀ ԳԱՄ նեոգիտության և ազգագրության ինստիտուտի գիտրադուղղոր

**ԳԼԽԱՎՈՐ ԽՈՒՍԻՅԱՆ ԱՆՎԵՆ ԻՆՏԵՐՆԱՅՆ**, բան. գիտ. դիվիզիոն, պրոֆեսոր

ԽՍՏԱԳՐԱՎԱԳՐՄ՝ ԱՍՏՈՐՅԱՆ ԳԱՆՈՒԿ, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր  
 ԱՎԱԳՅԱՆ ԱՐՄԻՈՒՆ, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր  
 ՄԵԼԻՔՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ, բան. գիտ. քննաժող, դոց.  
 ՄԱՖՈՐՅԱՆ ԱՆՔՏԱՆԴԻ, պատմ. գիտ. քննաժող, դոց.



Տարածվում է ՀԱՊՐՈՒԿ Իրատարությունը Նուբարյան  
 Բ. երևան, Դ. Փարսեզի 26/28 (գրասենյակ)  
 Ավան. Կաթիք մայրան 45 (տպագրան)  
 Դեռ. (374 10) 54 49 82, 82 38 63

Տպագրանակը՝ 99:  
 Թիքքը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝ Երևան 375025, Մրժվյան 52 Ա,  
 Հուլ բանասիրության Հանրապետի ժամանակ, 215 սենյակ,  
 հեռ. 54-43-91+1-18, 093-914-945